Տպագրված է 3 օրինակից

Օրինակ --

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
13/09/2010թ թիվ 10-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում
«14» սեպտեմբերի 2010թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-001

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ (ԱՊՊԱ պայմանագրի ձևը, պայմանները)

ԵՐԵՎԱՆ - 2010

	Ապահովագրական ընկերության լոգոտիպը	ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ							
		ՎԿԱՅԱԳԻՐ N	Տ						
	Ապահովագրող՝ Ապահովագրական ընկերության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարները, ֆաքսը, էլ. փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, ՀՀ ԿԲ-ում գրանցման համարը, լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշիվը:							
	Ապահովագրության դաս	*Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն*						
1.	Ապահովադիր							
2.	Ավտոտրանսպորտային միջոցների (Ա/մ) քանակ	Մեկից ավելի Ա/մ-ների դեպքում՝ սույն Վկայագրի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ դաշտերը՝ համաձայն կից Հավելվածի:						
3.	Ավտոտրանսպորտային միջոց	Ա/մ տեսակը		մակնիշը, տիպարը		հաշվառման համարանիշը		
		հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը		շարժիչի հզորությունը		շարժիչի համարը		
	տարեթիվը	գույնը	թափքի համարը		նույնացման համարը (VIN)		վազքը (կմ)	
4.	Շահագործման նպատակ	☐ անձնական		☐ ծառայողական		☐ տաքսի		
		☐ հանրային տրանսպորտ		☐ առևտրային օգտագործման		☐ այլ		
5.	Շահագործման հիմնական վայրը	☐ _____ մարզ ☐ Երևան		☐ գյուղական ☐ քաղաքային				
6.	Լիազորված տիրապետողներ							
7.	Ապահովագրության ժամկետ	սկիզբ՝ ___/___/ 20___ ժ __.__ (օր. ամս. տար.) ավարտ՝ ___/___/20___ ժ __.__ (օր. ամս. տար.)						
8.	Ապահովագրական գումար (յուրաքանչյուր Ա/մ գծով)	Անձնական վնասների համար՝ 3 000 000 ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր տուժողի, 9 000 000 ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի, Գույքին պատճառված վնասների համար՝ 1 500 000 ՀՀ դրամ՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի						
9.	Չհատուցվող գումար	☐ չի կիրառվում ☐ պայմանական _____ ☐ ոչ պայմանական _____						
10.	Ապահովագրավճար	_____ (_____) ՀՀ դրամ						
11.	Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ							
	☐կանխիկ	☐ ապահովագրավճարը վճարված է ամբողջությամբ սույն պայմանագրի կնքման պահին						
		☐_____ ՀՀ դրամի չափով ապահովագրավճարը վճարված է սույն պայմանագրի կնքման պահին, իսկ ապահովագրավճարի մնացած մասը՝ հետևյալ կարգով՝ _____ _____:						
	☐անկանխիկ	Ապահովագրավճարը վճարվում է հետևյալ կարգով և ժամկետում (ժամկետներում)՝ _____ _____:						
12.	Ապահովագրական պատահարներ (ռիսկեր)	Համաձայն ԱՊՊԱ Պայմանների 3-րդ գլխի:						

13.	**Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ**	Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարներով:
14.	**Ապահովագրության պայմանները**	«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից 13.09.2010 թ հաստատված Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններ (սույն Պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ), որոնք անբաժանելի են սույն Վկայագրից:

15.	**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ** _____	**ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ** _____ Ստացա լրացված ԱՊՊԱ կտրոնը, համաձայնեցված հայտարարագրի նմուշը, վեճերի լուծման բացատրական ամփոփոգիրը, ստացել, ծանոթացել և համաձայն եմ կցվող ԱՊՊԱ պայմաններին
	Կ.Տ. _____ **ստորագրություն**	**Կ.Տ.** _____ **ստորագրություն**
16.	**Պայմանագրի կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝**	___/___/20___
Նշումներ		

N	S								ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1.	Ա/մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվառման համարանիշը
	հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	շարժիչի համարը
	թափքի համարը	նույնացման համարը (VIN)	վազքը (կմ)
	տարեթիվը	գույնը	
	Շահագործման նպատակ	☐ անձնական ☐ հանրային տրանսպորտ	☐ ծառայողական ☐ առևտրային օգտագործման ☐ այլ
	Շահագործման հիմնական վայրը	☐ _____ մարզ ☐ Երևան	☐ գյուղական ☐ քաղաքային
	Ապահովագրավճար (տվյալ Ա/մ գծով)	_____(_____) ՀՀ դրամ	
	Լիազորված տիրապետողներ		

2.	Ա/մ տեսակը	մակնիշը, տիպարը	հաշվառման համարանիշը
	հաշվառման վկայագրի (մաքսային հայտարարագրի) համարը	շարժիչի հզորությունը	շարժիչի համարը
	թափքի համարը	նույն. համարը (VIN)	վազքը (կմ)
	Շահագործման նպատակ	☐ անձնական ☐ հանրային տրանսպորտ	☐ ծառայողական ☐ առևտրային օգտագործման ☐ այլ
	Շահագործման հիմնական վայրը	☐ _____ մարզ ☐ Երևան	☐ գյուղական ☐ քաղաքային
	Ապահովագրավճար (տվյալ Ա/մ գծով)	_____(_____) ՀՀ դրամ	
	Լիազորված տիրապետողներ		

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
Կ.Տ. _____ ստորագրություն	Կ.Տ. _____ ստորագրություն

N	S								ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

	Լիազորված տիրապետողներ	Լիազորված տիրապետողների վերաբերյալ տվյալներ
1.		
2.		
3.		

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ	ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ
Կ.Տ. _____ ստորագրություն	Կ.Տ. _____ ստորագրություն

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ (ԱՊՊԱ)

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ....7

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ....8

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ....8

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ....9

ԳԼՈՒԽ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ....10

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ....13

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ....14

ԳԼՈՒԽ 8. ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ....19

8.1. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ....19

8.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ....20

8.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ....24

8.4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ....26

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ....28

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ....29

ԳԼՈՒԽ 11. ՎԿԱՅԱԳՐԻ ԵՎ ԿՏՐՈՆԻ ՎՆԱՍՄԱՆ (ԽՈՏԱՆՄԱՆ), ԿՈՐՍՏԻ, ՀԱՓՇՏԱԿՄԱՆ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ....29

ԳԼՈՒԽ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ....31

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության Պայմանները (այսուհետ նաև՝ Պայմաններ) ԱՊՊԱ վկայագրի (այսուհետ նաև՝ Վկայագիր) հետ ԱՊՊԱ պայմանագրի անբաժանելի մասերն են:

1.2. ԱՊՊԱ պայմանագրի առարկա հանդիսացող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), այլ իրավական ակտերով, Վկայագրով և Պայմաններով:

1.3. Պայմաններում օգտագործվող հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքում կիրառվող նշանակությունը:

1.4. Պայմանները հաստատված են Բյուրոյի Խորհրդի կողմից, և դրանք կարող են փոփոխվել բացառապես Բյուրոյի Խորհրդի կամ Կենտրոնական բանկի կողմից Պայմաններում համապատասխան փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու կամ Պայմանները նոր խմբագրությամբ հաստատելու դեպքում: Նշված փոփոխությունների և (կամ) լրացումների կամ նոր խմբագրությամբ Պայմանների ընդունման մասին Ապահովագրողը պարտավոր է Բյուրոյի Պայմանները, դրանցում փոփոխությունները և(կամ) լրացումները Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո 5-օրյա ժամկետում պատշաճ կարգով ծանուցել Ապահովադրին:

1.5. Ապահովադրի՝ ԱՊՊԱ վկայագրում նշված հասցեի փոփոխության դեպքում Ապահովադիրը Ապահովագրողին տեղեկացնում է այդ մասին՝ ներկայացնելով նոր հասցե, որով Ապահովադիրը համաձայն կլինի ստանալ Ապահովագրողի կողմից Պայմանների համաձայն Ապահովադրին ուղարկվող ծանուցումները: Եթե Ապահովադիրը չի տեղեկացնում Ապահովագրողին հասցեի փոփոխության վերաբերյալ, ապա Ապահովադրի կողմից ներկայացված վերջին հասցեով Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված:

1.6. Պայմաններով սահմանված կարգով և պայմաններով Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով տուժած անձանց հասցված վնասները:

1.7. Պայմանների և Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար: Այն դեպքում, երբ Ապահովադիրը ավտոտրանսպորտային միջոցը վարման է հանձնում այլ անձի՝ այդ թվում այն անձին (անձանց), ով (ովքեր) հատուկ նշվել են Վկայագրի «Լիազորված տիրապետողներ» դաշտում, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջիններիս տեղեկացնել Վկայագրով և Պայմաններով նախատեսված պարտավորությունների անվերապահ կատարման մասին՝ հակառակ դեպքում այդ պարտավորությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն պայմանագրով Ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք կապված են Վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործումից բխող Ապահովադրի (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործումից տուժողին կամ նրա գույքին պատճառված Օրենքով և Պայմաններով սահմանված վնասների գծով:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Սույն պայմանագրի համաձայն՝ ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի և (կամ) Վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը (միջոցները) օրինական հիմքերով տիրապետող այլ անձի (անձանց) կողմից սույն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) օգտագործման հետևանքով տուժող անձին (անձանց) հետևյալ վնասների պատճառումը.

3.1.1. *անձնական վնասներ,* որոնք ներառում են տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտները), ինչպես նաև տուժողի մահը,

3.1.2. *գույքին պատճառված վնասներ,* որոնք ներառում են տուժողի ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, տուժողին պատկանող այլ գույքի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը՝ բացառությամբ վնաս պատճառող ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և տուժողին սեփականության իրավունքով պատկանող գույքի:

3.2. Պայմանների 3.1-րդ կետով սահմանված վնասներից բացառություն են կազմում՝

3.2.1. անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

3.2.2. ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

3.2.3. վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

3.2.4. տուժողի դիտավորության հետևանքով տվյալ տուժողին պատճառված վնասները,

3.2.5. պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,

3.2.6. արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ մետաղներին պատճառված վնասները,

3.2.7. բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,

3.2.8. օրենքով նախատեսված այլ վնասներ:

ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

4.1. Ապահովագրական գումարը ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) Պայմաններով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

4.2. Սույն պայմանագրով ապահովագրական գումարը մեկ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված մեկ ապահովագրական պատահարի համար կազմում է՝

4.2.1. անձնական վնասների համար՝

- 3.000.000 (երեք միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ ըստ յուրաքանչյուր տուժողի,
- 9.000.000 (ինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումար ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի:

4.2.2. գույքին պատճառված վնասների համար՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումար յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

4.3. Եթե Օրենքի և Պայմանների համաձայն՝ հատուցման ենթակա գույքին պատճառված վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա այդ անձանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց գույքին պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

4.4. Եթե Օրենքի և Պայմանների համաձայն՝ հատուցման ենթակա անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և այդ վնասների ընդհանուր գումարը գերազանցում է ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարը, ապա նրանցից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված անձնական վնասների չափերին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Սույն կետի համաձայն հաշվարկված՝ յուրաքանչյուր տուժողին վճարման ենթակա գումարը չի կարող գերազանցել ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը: Այն դեպքում, երբ տուժողներից մեկի (մի քանիսի) համար, սույն կետի համաձայն, համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները՝ այդ վնասներին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր տուժողի սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

4.5. Ապահովագրական գումարը Վկայագրի գործողության ընթացքում ենթակա չէ նվազեցման՝ անկախ այդ ընթացքում ապահովագրական պատահարների դիմաց վճարված ապահովագրական հատուցումների ծավալից և քանակից:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագրի գործողությունը դադարում է Վկայագրի «Ապահովագրության ժամկետը» դաշտում նշված ավարտի ժամկետը լրանալու պահից:

5.2. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝

ա) Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) վարձակալն է: Եթե Ապահովադիրը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը և ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի,

բ) Վկայագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը (միջոցները) հանվել է (են) պետական հաշվառումից.

գ) Ապահովագրողը լուծարվել է, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին Ապահովագրողը փոխանցում է ապահովագրական պորտֆելը,

դ) օրենքով նախատեսված դեպքերում Ապահովագրողն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ ապահովագրական ընկերության հետ,

ե) պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,

զ) Ապահովադրի պահանջով՝ ցանկացած ժամանակ, բայց ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից համապատասխան մտադրության մասին Ապահովագրողին ծանուցելու օրվանից 15 (տասնհինգ) օր հետո,

է) Ապահովագրողի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել սույն պայմանագրի պայմանների էական խախտում: Սույն ենթակետի հիմքով պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում: Ընդ որում, Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովադիրը խախտել է Պայմանների 10.1-րդ կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդեցություն ունեցող հանգամանքները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով,

ը) Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում: Սույն ենթակետի հիմքով պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովադրի կողմից՝ նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում:

թ) Ապահովագրողի պահանջով, եթե սույն պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել առնվազն երկու ապահովագրական պատահար և դրանց համար Ապահովագրողի

կողմից վճարված ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը գերազանցել է 10.500.000 (տաս միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամը, իսկ Ապահովադիրը չի համաձայնվել Վկայագրով սահմանված ապահովագրավճարների մեծությունը փոփոխելու Ապահովագրողի առաջարկությանը: Այս դեպքում Ապահովագրողը պարտավոր է պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին ծանուցել Ապահովադրին՝ պայմանագիրը լուծելու օրվանից առնվազն տասնհինգ օր առաջ: Սույն պայմանագիրը 2013 թվականի հունվարի 1-ից հետո երկարաձգվելու դեպքում սույն ենթակետով սահմանված դրույթի գործողությունը դադարեցվում է:

ժ) Ապահովագրողի պահանջով, եթե սույն պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը սույն պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին (Ապահովագրողի լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ: Ընդ որում, Ապահովագրողը չի կարող օգտվել սույն կետում նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ կամ պայմանագիրը կնքվել է ապահովագրական սակագնի որոշման վրա ազդող հանգամանքներին վերաբերող Ապահովագրողի հարցադրումներում Ապահովադրի պատասխանի կամ Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում:

ժա) Ապահովադրի պահանջով՝ եթե Պայմանների 1.4-րդ կետի համաձայն Ապահովագրողը ծանուցել է Պայմանների դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին:

ժբ) Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ և պայմանավորված ժամկետներում,

ժգ) օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով:

5.3. Պայմանների 5.2-րդ կետի «ա», «բ» և «ե» ենթակետերով նախատեսված հիմքերի առաջացման դեպքում Ապահովադիրն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Ապահովագրողին՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմումին կցելով նման հիմքերի առկայությունը հավաստող համապատասխան փաստաթղթեր:

5.4. Պայմանների 5.2-րդ կետի «ա»-ից «ե» ենթակետերով նախատեսված դեպքերում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին և Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները: Ընդ որում, Պայմանների 5.2-րդ կետի «ա», «բ» և «ե» կետերով նախատեսված հիմքերով պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում պայմանագրի գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու օրվանից սկսված, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ:

5.5. Պայմանների 5.2-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, ընդ որում ապահովագրավճարի՝ չլրացած ժամկետի համար վճարված մասի հաշվարկման համար Ապահովագրողի կողմից

հիմք են ընդունվում Ապահովադրի կողմից պայմանագրի համաձայն Ապահովագրողին փաստացի վճարված ապահովագրավճարների 80%-ը ((վճարված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր):

5.6. Պայմանների 5.2-րդ կետի «է» ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադրին վերադարձվում են Ապահովադրի կողմից պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարների և այդ պայմանագրով Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ հաշվարկներն իրականացվում են պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:

5.7. Պայմանների 5.2-րդ կետի «ը» ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադրին վերադարձվում են Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարների՝ և սույն պայմանագրով Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ հաշվարկներն իրականացվում են պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է, ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:

5.8. Պայմանների 5.2-րդ կետի «թ» ենթակետով նախատեսված դեպքերում պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին վերադարձվում են պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համար վճարված ապահովագրավճարները:

5.9. Պայմանների 5.2-րդ կետի «ժ» ենթակետով նախատեսված դեպքերում պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրի կողմից սույն պայմանագրով Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

5.10. Պայմանների 5.2 կետի «ժա» և «ժբ» ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից Ապահովադրին վերադարձվում են պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարները, իսկ հաշվարկներն իրականացվում են պայմանագրի վաղաժամկետ դադարման օրվա դրությամբ:

5.11. Այն դեպքում, երբ Վկայագրում նշված են մեկից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ և սույն գլխով սահմանված պայմանագրի դադարման հիմքերը վերաբերում են դրանցից ոչ բոլորին, ապա սույն պայմանագիրը դադարեցվում է միայն տվյալ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով, և սույն գլխով սահմանված հաշվարկները կատարվում են միայն այդ ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով:

5.12. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքերում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ԱՊՊԱ կտրոնը (կտրոնները)՝ անգամ եթե դրանք վնասված են՝ դադարեցմանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված կարգով ԱՊՊԱ կտրոնը Ապահովագրողին չվերադարձնելու դեպքում Ապահովադիրը վճարում է տուգանք՝ սույն գլխի համաձայն Ապահովադրին հետ վերադարձվող ապահովագրավճարի չափով, բայց ոչ պակաս, քան Պայմանների 11.7-րդ կետով ԱՊՊԱ կտրոնը պայմանագրի գործողության ընթացքում համապատասխան անգամ կորցնելու համար նախատեսված տուգանքի չափից:

ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

6.1. Ապահովագրավճարը Ապահովադրի (Ապահովադրի լիազորված անձի) կողմից վճարվում է Վկայագրում նշված չափով և ժամկետներում: Վկայագրում նշված ապահովագրավճարի՝ տառերով և թվերով լրացված տվյալների միջև անհամապատասխանություն լինելու դեպքում առաջնությունը տրվում է տառերով սահմանվածին:

6.2. Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարումը Ապահովադրի կողմից կարող է կատարվել՝

- *կանխիկ կերպով՝* Ապահովագրողի դրամարկղ մուտքագրելու կամ Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին վճարելու միջոցով: Այն դեպքում, երբ ապահովագրավճարը ֆիզիկական անձ ապահովագրական գործակալին կամ Ապահովագրողի ֆիզիկական անձ ներկայացուցչին վճարվում է կանխիկ կերպով, ապա Վկայագրում նշում է կատարում ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի ամբողջությամբ վճարված լինելու մասին: Այն դեպքում, երբ հետագա մասնակի վճարումները նույնպես իրականացվում են Ապահովագրողի ֆիզիկական անձ ներկայացուցչին կամ ֆիզիկական անձ ապահովագրական գործակալին, ապա վերջիններս Ապահովադրին (Ապահովադրի լիազորված անձին) տրամադրում են Ապահովագրողի սահմանած ձևով ստացական, որտեղ որպես վճարող ստորագրում է Ապահովադիրը (Ապահովադրի լիազորված անձը), իսկ որպես ստացող՝ Ապահովագրողի ներկայացուցիչը կամ ապահովագրական գործակալը: Սույն մասում նշված ստացականը կազմվում է երկու օրինակից՝ ստացող և վճարող յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ: Ստացականում նշվում են ապահովագրավճարը ստացող ապահովագրական գործակալի կամ Ապահովագրողի լիազորված անձի անձնագրային տվյալները:
- *անկանխիկ կերպով՝* Վկայագրում կամ Ապահովագրողի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին ապահովագրավճարը փոխանցելու միջոցով:

6.3. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ Վկայագրով կարող են սահմանվել ապահովագրավճարի վճարման հետևյալ եղանակներից որևէ մեկը՝

6.3.1.*միանվագ վճարում,* որի դեպքում ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ կերպով՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև պայմանավորված ժամկետում,

6.3.2.*տարաժամկետ վճարում,* որի դեպքում ապահովագրավճարը վճարվում է մասմաս՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև պայմանավորված ժամկետներում:

6.4. Եթե Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի մնացած մասի) վճարումը կետանցվում է, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի (ապահովագրավճարի մնացած մասի) վճարման համար սահմանված ժամկետից հետո դադարեցնել պայմանագիրը՝ դադարեցման օրվանից առնվազն հինգ օր առաջ այդ մասին գրավոր ծանուցելով Ապահովադրին:

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

7.1. Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր են ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով ԱՊՊԱ կտրոնի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով), որոնց շուրջօրյա հասանելիությունը (ներառյալ ոչ աշխատանքային օրերին) և հեռախոսազրույցի ձայնագրումը Ապահովագրողը պարտավորվում է ապահովել:

7.2. Սույն Պայմանների 7.1-րդ կետում նշված պահանջից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին անհապաղ ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելը, կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են Ապահովագրողին նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին տեղեկացվելու) դեպքում Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պարտավոր են անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին հայտնել Ապահովագրողին:

7.3. Պայմանների 7.1-րդ կետի համաձայն Ապահովագրողին զանգահարելու դեպքում Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պետք է հայտնի ապահովագրական պատահարի վերաբերյալ նախնական տեղեկատվությունը, որը պետք է առնվազն պարունակի՝

ա) Վկայագրի և (կամ) ԱՊՊԱ կտրոնի ծածկագիրը,

բ) տեղեկատվություն տրամադրելու պահին ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) հայտնի ամբողջ տեղեկատվությունը, մասնավորապես՝

- ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրը և ժամը,
- ապահովագրական պատահարի վայրը (ճշգրիտ հասցեն կամ հնարավորինս պարզ նկարագրությունը),
- ապահովագրական պատահարի մասնակիցների վերաբերյալ տվյալներ (առնվազն նրանց քանակը, հեռախոսահամարները, պատահարին մասնակից այլ ավտոտրանսպոր-տային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը),
- ապահովագրական պատահարի համառոտ նկարագիրը, պատահարի հետևանքով պատճառված վնասների բնույթը, վնասի մոտավոր մեծությունը (հնարավորության դեպքում),

գ) տեղեկատվություն Պայմանների 7.5-րդ կետում նշված համաձայնեցված հայտարարագիր կազմելու մասին համաձայնության առկայության կամ դրա բացակայության վերաբերյալ:

7.4. Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը Պայմաններով սահմանվում է 0 (զրո) ՀՀ դրամ:

7.5. Եթե ապահովագրական պատահարում ներգրավված է միայն երկու ավտոտրանսպորտային միջոց և վնաս է պատճառվել միայն գույքին և տեղի ունեցած պատահարի հետ կապված հարուցված չէ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, ապա Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահարում ներգրավված մյուս կողմի հետ փոխադարձ համաձայնության գալու և ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին Պայմանների 7.3-րդ կետում սահմանված տեղեկություններ հայտնելու ընթացքում Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) համաձայնությունը ստանալու դեպքում լրացնում են համաձայնեցված հայտարարագիրը, եթե ապահովագրական պատահարի արդյունքում տուժողին պատճառված վնասի չափը Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) և ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի գնահատականներով չի գերազանցում 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը: Համաձայնեցված հայտարարագիր կազմելու համար Ապահովագրողի անհամաձայնության դեպքում համաձայնեցված հայտարարագիրը չի լրացվում և ապահովագրական պատահարի հետ կապված հարցերը կարգավորվում են Օրենքով և Պայմաններով սահմանված՝ վնասի չափը և մեղավորության աստիճանը որոշելու ընդհանուր կանոններով:

7.6. Ապահովագրողի ներկայացուցիչը պարտավոր է Պայմանների 7.3-րդ կետով սահմանված տեղեկատվության ստացման ընթացքում կամ դրանից անմիջապես հետո Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին հեռախոսով տեղեկացնել համաձայնեցված հայտարարագիր կնքելու վերաբերյալ իր համաձայնության կամ անհամաձայնության մասին:

7.7. Ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) և Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) գործողությունները և համապատասխանաբար ապահովագրական հատուցման գործընթացները տարանջատվում են հետևյալ խմբերի՝

7.7.1. Պայմանների 7.5-րդ կետի համաձայն լրացվել է համաձայնեցված հայտարարագիր (այսուհետ նաև՝ Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթաց),

7.7.2. Պայմանների 7.5-րդ կետով սահմանված դեպքերում առկա չի եղել համաձայնեցված հայտարարագիր լրացնելու պատահարի մասնակիցների համաձայնությունը կամ Պայմանների 7.5-րդ կետով սահմանված դեպքերում առկա է եղել համաձայնեցված հայտարարագիր լրացնելու պատահարի մասնակիցների համաձայնությունը, սակայն Ապահովագրողը չի տվել իր համաձայնությունը կամ ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը գերազանցում է Պայմանների 7.5-րդ կետով սահմանված համաձայնեցված հայտարարագրի միջոցով հատուցվող վնասի

առավելագույն չափը կամ տեղի ունեցած պատահարի հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ (այսուհետ՝ Ստանդարտ հատուցման գործընթաց):

7.8. *Ստանդարտ հատուցման գործընթացի* դեպքում՝

7.8.1. Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) Պայմանների 7.1-րդ և 7.3-րդ կետերում նշված գործողությունները ձեռնարկելուց բացի, պարտավոր է նաև՝

ա) ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) տրված ցուցումներին, եթե այդպիսիք կան: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը:

բ) չլքել ապահովագրական պատահարի վայրը և չտեղաշարժել ավտոտրանսպորտային միջոցը կամ ապահովագրական պատահարի հետ կապ ունեցող առարկաները մինչև Ապահովագրողի ներկայացուցչի, իսկ Ապահովագրողի ներկայացուցչի պահանջով՝ նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ժամանումը և ապահովագրական պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունը ապահովելու և (կամ) օրենքի պահանջները կատարելու նկատառումներով,
- տեղաշարժերը պայմանավորված են եղել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով,
- Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է չսպասել Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելուն, եթե վերջինս Պայմաններում նշված ժամկետում չի ժամանել պատահարի վայր կամ հեռախոսով հայտնել է պատահարի վայր իր չժամանելու մասին և համապատասխան հետագա ցուցումներ է տվել Ապահովադրին (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին) և տուժողին (տուժողներին),

գ) համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին,

դ) Ապահովագրողի պահանջով տրամադրել ապահովագրական պատահարի պահին վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վարորդի վարորդական իրավունքի վկայականը և տվյալ ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական զննությունն անցած լինելու փաստը հավաստող փաստաթղթեր,

ե) Ապահովագրողի պահանջով՝ ապահովագրական պատահարից անմիջապես հետո անցնել ալկոհոլի կամ թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի օտագործման փաստի վերաբերյալ քննություն,

զ) ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի զննում անցկացնելու հնարավորություն,

է) մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր և (կամ) ապահովագրական պատահարի մյուս մասնակցի (մասնակիցների) համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով կամ հրահանգով: Նման դեպքերում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին) (հնավորության առկայության դեպքում),

ը) առանց Ապահովագրողի համապատասխան փորձաքննության արդյունքների կամ համաձայնության չընդունել մեղավորությունը և (կամ) չստանձնել պարտավորություններ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ պատահարի հետ կապված հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,

թ) տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու վերաբերյալ և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,

ժ) ապահովագրական պատահարի մյուս մասնակցին (մասնակիցներին) տրամադրել ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ բոլոր տվյալները, մասնավորապես իր անունը, ազգանունը, բնակության վայրը, ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ անունը և ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը (եթե Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) չի հանդիսանում տվյալ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր), Ապահովագրողի անվանումը, հասցեն, Վկայագրի և (կամ) ԱՊՊԱ կտրոնի կողը և ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ այլ տվյալներ,

ժա) տուժողին (տուժողներին) տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն կետի «բ», «գ», «զ», «ժ» և «ժբ» ենթակետերով սահմանված պահանջները,

ժբ) Ապահովագրողին տրամադրել ապահովագրական պատահարի վերաբերյալ իրեն հայտնի և իր տրամադրության տակ առկա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը:

7.8.2. *Ապահովագրողը* պարտավոր է՝

ա) ապահովագրական պատահարի մասին Պայմանների 7.1-րդ կետի համաձայն Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից իրեն տեղեկացման դեպքում, անհրաժեշտ հանգամանքները ճշտելուց հետո, Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին տեղեկացնել պատահարի վայր ժամանելու կամ չժամանելու իր մտադրության մասին,

բ) պատահարի վայր ժամանելու իր մտադրությունը Ապահովադրին և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձին հայտնելու դեպքում պատահարի վայրում ապահովել իր ներկայացուցչի (ներկայացուցիչների) ժամանումը ոչ ուշ, քան պատահարի վերաբերյալ ստացված հեռախոսազանգի պահից հետո՝ Երևան քաղաքում 45 րոպեի և Երևան քաղաքից դուրս՝ 90 րոպեի ընթացքում,

7.9. *<u>Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքում՝</u>*

7.9.1. Պայմանների 7.1-րդ և 7.3-րդ կետերում նշված գործողություններից բացի *Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը* պարտավոր է՝

ա) մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի հետ կազմել Պայմաններով նախատեսված և սահմանված կարգի համաձայնեցված հայտարարագիր,

բ) ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովադիրը (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո Ապահովագրողի ներկայացուցչի կողմից հեռախոսով Ապահովադրին տրված ցուցումներին (եթե նման ցուցումներ տրվել են): Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով Ապահովադրի (ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են Ապահովագրողի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են Ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել Պայմաններով սահմանված համաձայնեցված հայտարարագրի միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը:

գ) մինչև ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կամ Ապահովագրողի եզրակացության վերաբերյալ իր և (կամ) ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի համաձայնության ձեռքբերումը առանց Ապահովագրողի համաձայնության չիրականացնել վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ գույքի վերանորոգման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են վարորդի կամ ուղևորի անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով և հրահանգով: Նման դեպքերում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը պարտավոր է վթարված ավտոտրանսպորտային միջոցի կամ պատահարի արդյունքում վնասված այլ

գույքի վերանորոգման աշխատանքները սկսելուց առնվազն մեկ օր առաջ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին (Ապահովագրողի ներկայացուցչին կամ ապահովագրական գործակալին) (հնավորության առկայության դեպքում),

դ) տեղեկանալուց հետո անհապաղ Ապահովագրողին տեղեկացնել պատահարը տեղի ունենալու կամ դրա արդյունքում պատճառված վնասների առթիվ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցվելու մասին և ներկայացնել նման գործ հարուցված լինելը ապացուցող փաստաթղթեր,

ե) ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան ավտոտրանսպորտային միջոցի զննումն անցկացնելու հնարավորություն,

զ) ապահովագրական պատահարի մասնակից մյուս ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձին տեղեկացնել, որ ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ է պահպանել սույն կետի «ա», «գ», «ե» և «է» ենթակետերով սահմանված պահանջները,

է) համապատասխան պահանջի առկայության դեպքում ներկա գտնվել և (կամ) մասնակցել պատահարի գրանցման և քննության պետական մարմինների և Ապահովագրողի՝ իրեն վերաբերող գործընթացներին:

7.9.2. *Ապահովագրողը* պարտավոր է ապահովագրական պատահարի մասին իրեն տեղեկացնելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում կատարել պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցների և (կամ) գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով:

ԳԼՈՒԽ 8. ՎՆԱՍՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8.1. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ԵՎ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

8.1.1. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում գույքին պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից՝ բացառությամբ Պայմանների 7.7.1-րդ կետով նախատեսված Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքերի, երբ գույքին պատճառված վնասի չափը գնահատվում է և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է Ապահովագրողի համապատասխան աշխատակիցների կողմից՝ համաձայնեցված հայտարարագրի, տուժողի ներկայացրած այլ փաստաթղթերի և տեղեկությունների՝ ներառյալ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած արձանագրության (եթե նման արձանագրություն կազմվել է), և Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) կողմից իրականացված զննության արդյունքների հիման վրա:

8.1.2. Քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պատճառված անձնական վնասների չափը գնահատվում է, և

դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ պատճառված անձնական վնասների չափը գնահատում է տուժողին բժշկական օգնություն ցուցաբերած կամ նրա առողջությունը վերականգնած բժշկական կամ այլ հաստատությունը կամ մասնագետը, իսկ անձի մեղավորության աստիճանը՝ փորձագետը:

8.1.3. Պայմանների 7.7.1-րդ կետով նախատեսված կարգով համաձայնեցված հայտարարագիր լրացնելու և ապահովագրական հատուցման գործընթացը համապատասխանաբար համաձայնեցված հայտարարագրի համար Պայմաններով սահմանված պահանջներով կարգավորելու դեպքում տուժողին հատուցվող գումարը չի կարող գերազանցել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը:

8.1.4. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտների) հատուցման չափը, ինչպես նաև տուժողի մահվան դեպքում օրենքի համաձայն նրա մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձանցից յուրաքանչյուրի կրած վնասի հատուցման չափը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝ հաշվի առնելով Օրենքի պահանջները:

8.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.2.1. Ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողը կամ նրա իրավահաջորդը պետք է Ապահովագրողին դիմի ապահովագրական պատահարի օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում:

8.2.2. Եթե տուժողը կամ նրա իրավահաջորդը Պայմանների 8.2.1-րդ կետով սահմանված եռամսյա ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու համար չի դիմում՝ պատահարի հետևանքով անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում լինելու պատճառով, որն անհնարին է դարձրել տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Ապահովագրողին սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական հատուցում ստանալու համար դիմելը կամ գույքին պատճառված վնասների առկայության դեպքում՝ այդ գույքի պահպանման համար պատասխանատու անձի (գույքը նրա մոտ գտնվել է այն պահպանելու, օգտագործելու կամ նրա համաձայնությամբ այլ նպատակներով) կողմից պատահարի մասին չտեղեկացնելու պատճառով, ապա նրա համար եռամսյա ժամկետը սկսում է գործել ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելն անհնարին դարձնող հանգամանքների վերացման կամ ապահովագրական պատահարի մասին տեղեկանալու օրվանից սկսած: Տուժողը կամ նրա իրավահաջորդը կրում են ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու ապացուցման պարտականությունը:

8.2.3. *Համաձայնեցված հայտարարագրով հատուցման* գործընթացի դեպքում տուժողը (տուժողի իրավահաջորդը) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողի սահմանած ձևով դիմում, որը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված,

բ) դիմումը Պայմանների 8.2.1-րդ կետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում՝ տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից եռամսյա ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,

գ) տուժողի և Ապահովադրի (ապահովագրական պատահարի պահին ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) միջև կնքված համաձայնեցված հայտարարագիրը,

դ) անձը հաստատող փաստաթուղթը,

ե) վնասված ավտոտրանսպորտային միջոցի և (կամ) այլ գույքի նկատմամբ տուժողի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ (փաստաթղթեր) կամ այլ ապացույցներ,

զ) տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է տուժողի իրավահաջորդը,

է) պատճառված վնասի չափը հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ, եթե Պայմանների 7.9.2-րդ կետով նախատեսված կարգով և ժամկետներում Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի և (կամ) այլ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կողմից արձանագրություն չի կազմվել: Սույն ենթակետով նախատեսված ապացույցները ներկայացնելու փոխարեն կարող է ներկայացվել վերականգնման ենթակա համապատասխան գույքը Պայմանների 8.4.2-րդ և 8.4.3-րդ կետերով սահմանված կարգով վերանորոգելու միջոցով հատուցումը վճարելու նպատակով.

ը) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած արձանագրությունը (արձանագրություն կազմված լինելու դեպքում),

թ) ապահովագրական պատահարի արդյունքում տուժողի գույքի կորստի դեպքում՝ գույքի կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

ժ) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ:

8.2.4. Ապահովագրողի կողմից որպես Պայմանների 8.2.3-րդ կետի «է» ենթակետում նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը հիմնավորող փաստաթղթեր ընդունվում են՝

ա) պահեստամասերի, նյութերի և այլ ապրանքների ձեռքբերման դիմաց վճարման փաստը հավաստող անդորրագրեր և (կամ) կտրոններ և (կամ) վճարման հանձնարարականներ կամ հաշիվ ապրանքագրեր (վճարման հաշիվներ),

բ) կատարված վերանորոգման աշխատանքների դիմաց վճարման փաստը կամ վճարման ենթակա գումարը հավաստող փաստաթղթեր (անդորրագրեր և (կամ) կտրոններ և (կամ) վճարման հանձնարարականներ և (կամ) ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ ծառայությունների դիմաց վճարման մասին նշումով, եթե գումարն արդեն վճարված է),

գ) այլ հիմնավորող փաստաթղթեր:

8.2.5. *Ստանդարտ հատուցման գործընթացի* դեպքում տուժողը (տուժողի իրավահաջորդը) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողի սահմանած ձևով դիմում, որը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված,

բ) դիմումը Պայմանների 8.2.1-րդ կետով նախատեսված ժամկետներում չներկայացվելու դեպքում՝ տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից եռամսյա ժամկետում դիմելու անհնարինության կամ տեղյակ չլինելու հանգամանքները հիմնավորող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ,

գ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու լիազոր մարմնի կազմած արձանագրությունը (արձանագրություն կազմված լինելու դեպքում),

դ) տուժողի իրավահոջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է տուժողի իրավահաջորդը,

ե) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ,

զ) 8.2.5.1-րդ, 8.2.5.2-րդ և (կամ) 8.2.5.3-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը և այլ ապացույցները՝ կախված պատճառված վնասի բնույթից:

8.2.5.1. Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են՝

ա) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն) և (կամ) բժշկական տեղեկանք և (կամ) կոնսուլտացիոն եզրակացություն և (կամ) քաղվածք ամբուլատոր քարտից և (կամ) էպիկրիզ,

բ) բժշկական հաստատությունների կողմից տրված վճարման հաշիվներ, իսկ Պայմանների 8.4.7-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր,

գ) տուժողի առողջությանը պատճառված վնասների հետևանքով աշխատավարձի (եկամուտների) կորստի դեպքում՝ կորցրած աշխատավարձի (եկամուտների) չափը հաստատող փաստաթղթեր,

դ) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

8.2.5.2. Տուժողի մահվան հետ կապված հատուցում ստանալու համար ներկայացվում են՝

ա) օրենքի համաձայն տուժողի մահվան հետևանքով վնասների հատուցման իրավունք ունեցող անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր,

բ) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն),

գ) մահվան վկայական,

դ) տուժողի կողմից հուղարկավորության ծախսերի հատուցում պահանջելու դեպքում՝ հուղարկավորության հետ կապված իր կողմից կատարված ծախսերը հաստատող փաստաթղթեր,

ե) կերակրողին կորցնելու հետ կապված վնասի հատուցման չափը հավաստող փաստաթղթեր (եթե պահանջվում է հատուցել կերակրողին կորցնելու հետ կապված ծախսերը),

զ) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

8.2.5.3. Տուժողի գույքին պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացվելու դեպքում ներկայացվում են՝

ա) ավտոտրանսպորտային միջոցի, ինչպես նաև այլ գույքի վնասման (ոչնչացման) դեպքում՝ վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,

բ) ավտոտրանսպորտային միջոցի, ինչպես նաև այլ գույքի կորստի դեպքում՝ կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

գ) տուժողի հայեցողությամբ՝ վնասի չափը և Ապահովադրի և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր:

8.2.6. Եթե տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու պահին առկա է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, ապա Պայմանների 8.2.5-րդ կետով սահմանված փաստաթղթերի փոխարեն ներկայացվում են միայն ապահովագրական հատուցում ստանալու տուժողի (նրա իրավահաջորդի) դիմումը և գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթուղթը:

8.2.7. Ապահովագրական հատուցում ստանալու համար սույն գլխով նախատեսված փաստաթղթերը ներկայացվում են պատճենահանված վիճակում՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք իրավական նշանակություն ունեն բացառապես տվյալ պատահարի գծով ապահովագրական հատուցում ստանալու համար, որոնք ներկայացվում են բնօրինակով: Ընդ որում, փաստաթղթերի պատճենները ներկայացվելու դեպքում Ապահովագրողին ցույց է տրվում նաև դրանց բնօրինակները, որի մասին համապատասխան գրառում է կատարվում պատճենի վրա: Ապահովագրողը Պայմաններով սահմանված դիմումը և փաստաթղթերը ստանալուց հետո տուժողին կամ նրա իրավահաջորդին գրավոր տրամադրում է տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից դեռևս չներկայացված, սակայն ապահովագրական հատուցման վճարման համար Ապահովագրողին ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը:

8.2.8. Ապահովագրական պատահարի ժամանակ սույն պայմանագրով տուժող չեն համարվում և ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝

ա) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, Ապահովադիրը և վնասը պատճառած անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող և սույն պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ այլ անձանց կողմից պատճառվել է վնաս,

բ) այն անձինք, որոնք գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ ավտոտրանսպորտային միջոցը հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ.

գ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող և սույն պայմանագրով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ այլ անձինք վնաս են պատճառել: Սույն կետի համաձայն՝ ընտանիքի անդամներ են ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ծնողները, ամուսինը, երեխաները, քույրը և եղբայրը:

8.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.3.1. Ապահովագրողը տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Պայմաններով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, ինչպես նաև համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի դեպքերի: Փորձաքննության ավարտից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողը փորձաքննության արդյունքների մասին գրավոր ծանուցում է Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): Ապահովագրողը սույն կետով նախատեսված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, լրացուցիչ փորձաքննություն չնշանակվելու և կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը ընդունելու պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

8.3.2. Եթե ըստ Ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և Ապահովագրողի՝ փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չէ, ապա նրանք Պայմանների 8.3.1-րդ կետով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ նշանակելու լրացուցիչ փորձաքննության անցկացում: Լրացուցիչ փորձաքննության անցակցման ժամկետը սահմանվում է Ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ, սակայն ոչ ավելի, քան 3 (երեք) ամիս: Լրացուցիչ փորձաքննությունն անցկացվում է Ապահովագրողի միջոցների հաշվին: Լրացուցիչ փորձաքննության նշանակման դեպքում՝ լրացուցիչ փորձաքննության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը փորձաքննության արդյունքների մասին գրավոր ձևով ծանուցում է Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): Ապահովագրողը սույն կետով նախատեսված

ծանուցումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկնակի փորձաքննության պահանջ չներկայացվելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

8.3.3. Եթե Ապահովադիրը, ապահովագրված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը) կամ Ապահովագրողը համաձայն չէ Պայմանների 8.3.1-րդ կամ 8.3.2-րդ կետով սահմանված կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, ապա նա սույն պայմանագրի համապատասխանաբար 8.3.1-րդ կամ 8.3.2-րդ կետով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունի պահանջելու կրկնակի փորձաքննության անցկացում: Կրկնակի փորձաքննությունն անցկացվում է այն անցկացնելու պահանջ ներկայացրած անձի միջոցների հաշվին: Միևնույն ապահովագրական պատահարի սահմաններում սույն պայմանագրով նախատեսված կրկնակի փորձաքննության պահանջ կարող ներկայացվել միայն մեկ անգամ:

8.3.4. Կրկնակի փորձաքննության անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: Կրկնակի փորձաքննության ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է գրավոր որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

8.3.5. Եթե հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ, և ուժի մեջ է մտել այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ, Ապահովագրողը Պայմաններով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, որոշում է ընդունում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:

8.3.6. <u>Համաձայնեցված հայտարարագրով հատուցման գործընթացի</u> դեպքերում Ապահովագրողը տուժողի կողմից Պայմաններով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին գրավոր ծանուցում է պատճառված վնասի չափի գնահատման և դրանում անձի մեղավորության աստիճանի որոշման վերաբերյալ իր եզրակացությունը, որը պետք է հիմնված լինի համաձայնեցված հայտարարագրի, տուժողի ներկայացրած այլ փաստաթղթերի և ապացույցների, ինչպես նաև Ապահովագրողի աշխատակիցների կողմից վնասված գույքի զննության արդյունքների վերլուծության վրա: Ապահովագրողը, սույն կետով սահմանված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում, 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին՝ համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով Ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

8.3.7. Պայմանների 8.3.6-րդ կետով սահմանված դեպքերում փորձաքննության պահանջ ներկայացվելու դեպքում ապահովագրական հատուցման գործընթացն իրականացվում է սույն գլխով նախատեսված ընդհանուր կարգով:

8.3.8. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը մերժվում է հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

ա) տուժող անձը կամ նրա իրավահաջորդը արդեն իսկ հատուցում է ստացել վնասը պատճառած անձից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վնաս պատճառած անձի կողմից հատուցումը ստացվել է չհատուցվող գումարի և (կամ) Վկայագրում նշված ապահովագրական գումարը գերազանցող գումարի գծով,

բ) տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից խախտվել են Պայմաններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին դիմելու ժամկետները և չի հիմնավորվել Պայմանների 8.2.2 կետում նշված հանգամանքների առկայությունը,

գ) տուժողը կամ նրա իրավահաջորդը Պայմանների 8.2.7 կետի համաձայն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո եռամսյա ժամկետում չի ներկայացրել պահանջվող բոլոր փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ, ինչպես նաև եթե այդ փաստաթղթերը կեղծ են կամ թերի:

դ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8.3.9. Պայմաններով սահմանված փորձաքննությունը նշանակելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում Ապահովագրողը տուժողին կամ նրա իրավահաջորդին յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարում է տույժ՝

ա) ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումն ընդունելու ժամկետները կետանցելու դեպքում՝ ապահովագրական հատուցման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով,

բ) փորձաքննություն նշանակելու, ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշումներն ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրով տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0.1 տոկոսի չափով:

8.3.10. Եթե առկա է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով հարուցված վարչական գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա Պայմանների 8.3.9-րդ կետում նշված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը: Կասեցված ժամանակահատվածի համար Պայմանների 8.3.9-րդ կետում նախատեսված տույժը չի գանձվում:

8.4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8.4.1. Տուժողի գույքին պատճառված վնասները հատուցվում են տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) համապատասխան գումար վճարելու ձևով կամ պատճառված վնասի վերականգնման միջոցով: Տարբերակների ընտրությունն իրականացվում է տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից: Ընդ որում, եթե Ապահովագրողի փորձագետի եզրակացության համաձայն՝ վնասի վերականգնումը

հնարավոր կամ ողջամիտ չէ, ապա Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարվում է համապատասխան գումար վճարելու միջոցով:

8.4.2. Տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև գույքին պատճառված վնասի վերականգնումն ընտրելու դեպքում Ապահովագրողը տուժողին (նրա ներկայացուցչին կամ ժառանգին) է տրամադրում համապատասխան գույքը վերանորոգող այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է, իսկ տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) այդ ցանկից ընտրում է որևէ կազմակերպության: Տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) իրավունք ունի մինչև ապահովագրական հատուցման ստացման ձևի վերաբերյալ իր ընտրության կատարումը Ապահովագրողից պահանջել համապատասխան գույքը վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որոնց հետ Ապահովագրողը համագործակցում է:

8.4.3. Պայմանների 8.4.2-րդ կետով նախատեսված դեպքերում տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) ընտրած կազմակերպությունը Ապահովագրողին առաջադրում է վնասված գույքի վերանորոգման ժամկետ: Եթե կազմակերպության առաջարկած ժամկետը ընդունելի է տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) համար, ապա Ապահովադիրը իր, կազմակերպության և տուժողի (նրա ներկայացուցչի կամ ժառանգի) միջև պայմանավորված կարգով և ժամկետներում կազմակերպում է վնասված գույքի վերանորոգումը և դրա դիմաց վճարումը կազմակերպությանը: Եթե տուժողը (նրա ներկայացուցիչը կամ ժառանգը) համաձայն չէ կազմակերպության առաջադրած ժամկետների հետ, ապա նա կարող է ընտրել Ապահովագրողի ցանկում ներառված այլ կազմակերպություն կամ պահանջել Ապահովագրողից՝ ապահովագրական հատուցումը իրեն վճարել համապատասխան գումարը վճարելու ձևով:

8.4.4. Պայմանների 8.4.1-րդ կետով նախատեսված դեպքում տուժողի կողմից որպես ապահովագրական հատուցման ստացման ձև համապատասխան գումարի վճարումն ընտրելու դեպքում ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

8.4.5. Անձնական վնասների դեպքում ապահովագրական հատուցումը Ապահովագրողի կողմից վճարվում է միանվագ՝ ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը ընդունելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտների) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքում ապահովագրական հատուցումների վճարման դեպքերի:

8.4.6. Տուժողի առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձի (եկամուտների) և տուժողի մահվան (կերակրողին կորցնելու մասով) դեպքերում ապահովագրական հատուցման վճարումն Ապահովագողի կողմից կատարվում է ամենամսյա վճարումների տեսքով մինչև օրենքի համաձայն համապատասխան հատուցումն ստանալու իրավունքի դադարումը կամ ապահովագրական գումարի սպառումը, ընդ որում առաջին վճարումը կատարվում է ապահովագրական հատուցումը վճարելու մասին Ապահովագրողի որոշումը ընդունելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.4.7. Անձի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.

ա) Օրենքի 12-րդ հոդվածի 6-8-րդ մասերով նախատեսված ծախսերը,

բ) բժշկի ցուցումով բուժման շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման հետ կապված ծախսերը,

գ) տուժողի առողջության վերականգնման համար տուժողի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե տուժողը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

9.1. Ապահովագրողն հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝

9.1.1. վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե՝

ա) նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո,

բ) նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց,

գ) նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով զրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ Պայմանների 9.1.2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի,

դ) Վկայագրով սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

9.1.2. վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (Ապահովադրի) նկատմամբ, եթե՝

ա) ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում,

բ) Վկայագրով սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,

գ) ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք,

դ) սույն պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել Ապահովագրողին՝ ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների (Պայմանների գլուխ 10) վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել Ապահովագրողին մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը:

9.2. Եթե սույն գլխի համաձայն՝ Ապահովագրողը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք Ապահովագրողի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

9.3. Եթե օրենքի համաձայն՝ Ապահովագրողը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում տուժողի նկատմամբ, ապա վերջինիս համաձայնության առկայության դեպքում

Ապահովագրողն իրավունք ունի համապատասխան պարտավորության գումարը հաշվանցել տվյալ տուժողին վճարվելիք ապահովագրական հատուցման գումարից:

ԳԼՈՒԽ 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

10.1 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անհապաղ հայտնել պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա:

10.2 Բոլոր դեպքերում էական են համարվում Վկայագրում նշված հետևյալ տեղեկությունների փոփոխությունները՝

ա) ավտոտրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրը,

բ) ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ձևը (նպատակը),

գ) ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում արտացոլված տեղեկությունները,

դ) լիազորված տիրապետողների ցանկը, ինչպես նաև լիազորված տիրապետողների (այդ թվում՝ Ապահովադրի) վերաբերյալ սույն պայմանագիրը կնքելիս տրամադրված այն տեղեկությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ նրանց վթարավտանգության աստիճանը որոշելու համար (բացառությամբ վարորդական ստաժի վերաբերյալ տեղեկատվության):

10.3 Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել Վկայագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

10.4 Ապահովադրի կողմից սույն գլխով սահմանված տեղեկացման պարտականությունը պատշաճ կերպով չկատարվելու դեպքում փոփոխված հանգամանքները համարվում են առկա ԱՊՊԱ պայմանագիրը կնքելու պահից, որոնց մասին սուտ տեղեկություններ հայտնած Ապահովադիրը կրում է Պայմաններով նախատեսված պատասխանատվությունը՝ բացառությամբ եթե ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքներն արդեն վերացել են:

ԳԼՈՒԽ 11. ՎԿԱՅԱԳՐԻ ԵՎ ԿՏՐՈՆԻ ՎՆԱՍՄԱՆ (ԽՈՏԱՆՄԱՆ), ԿՈՐՍՏԻ, ՀԱՓՇՏԱԿՄԱՆ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

11.1. Պայմանագրի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքում այն ենթակա է փոխարինման կրկնօրինակով, որի նպատակով Ապահովադիրը այդ մասին Պայմանագրի վնասմանը (խոտանմանը), կորստին, հափշտակմանը կամ ոչնչացմանը հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրերի ընթացքում գրավոր տեղեկացնում է Ապահովագրողին անմիջականորեն կամ գրավոր դիմումը Ապահովագրողի ներկայացուցչի կամ ապահովագրական գործակալի միջոցով Ապահովագրողին ուղարկելով:

11.2. ԱՊՊԱ կտրոնի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքում այն ենթակա է փոխարինման նոր կտրոնով, որի նպատակով Ապահովադիրն այդ մասին կտրոնի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացմանը հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է Ապահովագրողին անմիջականորեն կամ գրավոր դիմումը Ապահովագրողի ներկայացուցչի կամ ապահովագրական գործակալի միջոցով Ապահովագրողին ուղարկելով:

11.3. Վնասված (խոտանված) կտրոնը նորով փոխարինելու համար Ապահովագրողին դիմած Ապահովադիրը վերադարձնում է վնասված (խոտանված) կտրոնը, իսկ Ապահովադրի կողմից վնասված (խոտանված) կտրոնը վերադարձնելու հնարավորության բացակայության դեպքում՝ Ապահովադիրը պետք է ապացուցի կտրոնի վնասված (խոտանված) լինելու փաստը: Նման ապացույցների հիմնավորված լինելը որոշում է Ապահովագրողը, իսկ այդ ապացույցների բացակայության դեպքում՝ կտրոնը համարվում է կորած:

11.4. Կտրոնը և (կամ) պայմանագիրը համարվում է վնասված (խոտանված), եթե այն պատռվել է, գունաթափվել է, քայքայվել է, դարձել է անընթեռնելի կամ մասնակի այրվել է, ինչպես նաև այն դեպքերում, երբ դրանցում կատարված են ուղղումներ, ջնջումներ և (կամ) փոփոխություններ:

11.5. Պայմանների 11.1-րդ և 11.2-րդ կետերով սահմանված պահանջից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը հայտնվել է այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր Պայմանների 11.1-րդ և 11.2-րդ կետերով սահմանված ժամկետում տեղեկացնելը Ապահովագրողին կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել կտրոնի կամ պայմանագրի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման մասին: Սույն կետով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է կտրոնի և (կամ) Վկայագրի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման մասին տեղեկացվելուց հետո Պայմանների 11.1-րդ և 11.2-րդ կետերով սահմանված ժամկետում և կարգով հայտնել Ապահովագրողին:

11.6. Ապահովագրողը պարտավոր է (ներառյալ ապահովագրական գործակալի կամ Ապահովագրողի ներկայացուցչի միջոցով) ստուգել Ապահովադրի հետ պայմանագիր կնքելու փաստը և անհապաղ, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանը հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադրին տրամադրել պայմանագրի կրկնօրինակը՝ Վկայագրի վրա սահմանված կարգով կատարելով «ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» և նախկին Վկայագրի համարի նշագրում և (կամ) նոր կտրոն:

11.7. Կտրոնի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքերում Ապահովադիրը Ապահովագրողին վճարում է տուգանք՝ ստորև աղյուսակում նշված չափերով.

Կտրոնի վիճակը	*Պայմանագրի գործողության ընթացքում առաջին անգամ*	*Պայմանագրի գործողության ընթացքում երկրորդ անգամ*	*Պայմանագրի գործողության ընթացքում երրորդ և յուրաքանչյոր հաջորդ դեպքերում*
1. Վնասված (խոտանված)			
1.1. Պատռվել է	0 դրամ	1000 դրամ	5000 դրամ
1.2. Գունաթափվել է	0 դրամ	1000 դրամ	5000 դրամ
1.3. Քայքայվել է	0 դրամ	1000 դրամ	5000 դրամ

1.4. Անընթեռնելի է դարձել	0 դրամ	1000 դրամ	5000 դրամ
1.5. Մասնակի այրվել է	0 դրամ	1000 դրամ	5000 դրամ
1.6. Ուղղումներ, ջնջումներ և փոփոխություններ են կատարվել	10 000 դրամ	20 000 դրամ	30 000 դրամ
2. Կորած	5000 դրամ	15 000 դրամ	30 000 դրամ
3. Հափշտակված	0 դրամ	5 000 դրամ	10 000 դրամ
4. Ոչնչացած	5000 դրամ	15 000 դրամ	30 000 դրամ

11.8. Եթե կտրոնը վնասվում (խոտանվում), կորում, հափշտակվում կամ ոչնչանում է ապահովագրական պատահարի արդյունքում, ապա Պայմանների 11.7 կետով սահմանված տուգանքները չեն կիրառվում:

ԳԼՈՒԽ 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Սույն պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

12.2. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: